ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ь И

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

Դավիթ Անհաղթը քննարկում է սահմանման հետ սերտ առնչության մեջ գտնվող այլ հասկացությունների բնույթը։ Դրանց թվին է պատկանում «սահմանադրութիւնը»։ Սահմանման և սահմանադրության մեջ տարբերությունը տեսակի և սեռի, մասնավորի և ընդհանուրի տարբերությունն է (էջ 30), բացատրում է իր միտքը Դավիթ Անհաղթը և լուսաբանում մարդ և կենդանի էակ հասկացությունների փոխհարաբերությամբ։ Ելնելով այս հասկացություններին նրա տված մեկնաբանությունից, պետք է ենթադրել, որ «սահմանադրութիւնը» ցույց է տալիս այն (սեռը), որին պետք է հանգեցնել սահմանվողը, կարծես թե սահմանագծում է այն շրջանակները, որոնք ներառնելու է սահմանվողը։ Թերևս, ելնելով Դավիթ Անհաղթի մտահղացումից, ժամանակակից հայերենում «սահմանադրութիւն» բառի համարժեքն ընդունենք «սահմանագծում» բառը։ «Քանզի որ ինչ սահմանադրութիւն է՝ նա և սահման. այլ ոչ որ ինչ սահման՝ նա և սահմանադրութիւն, քանզի սահմանադրութիւն ոչ միայն զսահման նշանակէ, այսինքն զհամառօտ բան զյայտնիչ բնութեան ենթակայ իրին, այլ և զսահմանադրութիւնս վայրից և գեաւղից և ադարակաց ըստ Արիստոտէլի, և ընդ սովաւ և զայնս, յորս վերլուծանի առաջարկութիւնն» (էջ 30—32)։

Դավիթ Անհաղթը միևնույն ժամանակ զգուշացնում է, որ չնայած սահմանման և սահմանադրության (սահմանագծման) տարբերությանը, սահմանումը շատ հաճախ կոչում են սահմանադրություն, այնպես, ինչպես մարդուն հաճախ կենդանի են անվանում, դրանով իսկ հիշատակելով նրա սեռը։

Սահմանման հետ Դավիթ Անհաղթը առնչում է նաև «ստորագրութիւն» տրամաբանական հնարը։ Ի՞նչ հարաբերության մեջ են սահմանումն ու ստորագրությունը։ Սահմանումը, նրա մեկնաբանմամբ, գործ ունի սահմանվող հասկացության մեջ արտացոլված առարկայի էության հետ։ «...Սահման ամենայն իրօք ի վերայ գոյիցն առնու»[37]։ Ստորագրության դեպքում մենք գործ ունենք ինչպես էական, այնպես էլ ոչ էական հատկությունների հետ. «...Ստորագրութիւն կարող գոյ և ի վերայ գոյիցն և ի վերայ ոչ գոյիցն առնուլ»[38]։ Դա

---

* *Սկիզբը տե՛ս 1979 թ. № 3։*

37 *Դ ա ւ ի թ Ա ն յ ա ղ թ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի, էջ 64։*

38 *Նույն տեղում։ Ինչպես որոշ ձեռագրերում, այնպես էլ վերջիններիս հիման վրա կատարված հրատարակություններում «ստորագրութիւն» տերմինի կիրառման գործում միօրինակություն չկա։ Այսպես, եթե Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1716 ձեռագրի 112ա, 113ա-բ էջերում բազմիցս հանդիպում ենք «ստորագրութիւն» տերմինին, ապա № 1747 ձեռագրում այդ հարցում անհետևողականություն է նկատվում. մի դեպքում օգտագործված է «ստորագրութիւն» (տե՛ս էջ 23ա-բ, 24ա, 25բ, 28ա-բ, և այլն), մի այլ դեպքում, և երբեմն նույն էջում, կիրառվում է «ստորագրութիւն» տերմինը (տե՛ս էջ 23բ, 25բ, 26ա, 28ա-բ և այլն)։ Ս. Արևշատյանը համահավաք բնագրերում հետևողականորեն գիմում է «ստորագրութիւն»*

Դավիթ Անհաղթը լուսաբանում է հետևյալ օրինակով. մարդը ուղիղ գնացող, ծիծաղող և լայնեղունգ էակ է։ Այս միտքը արտահայտում է ոչ թե մարդու էությունը, այլ նրա որոշ պատահական հատկությունները (էջ 28)։

Դավիթ Անհաղթը սահմանումը տարբերում է «ստորագրական սահմանումից» (էջ 32)։ Առաջինի համար բնորոշ է այն. որ նրանում նշված են միայն էական հատկությունները, մինչդեռ ստորագրական սահմանման մեջ գործ ունենք ինչպես էական, այնպես էլ պատահական հատկությունների հետ։ Այդ պատճառով էլ առաջին սահմանումը նա անվանում է «միայնատեսակ», իսկ երկրորդը՝ «խառնակ» (էջ 32)։ Դավիթ Անհաղթը առաջադրում է նաև այն չափանիշը, որով սահմանումը կարող է վերածվել ստորագրական սահմանման։ Դրա համար բավական է սահմանման մեջ նշված և տվյալ առարկային բնորոշ էական հատկություններին ավելացնել թեկուզ մեկ պատահական հատկություն, այնպես, ինչպես ասենք,—բացատրում է իր միտքը Դավիթ Անհաղթը,—քնարի բարեհնչության համար անհրաժեշտ է, որ նրա լարերը լինեն տեղում, իսկ անբարեհնչության համար բավական է տեղափոխել թեկուզ մի լար (էջ 32)։ Եվ, հակառակը, նրա կարծիքով, նկարագրությունից (որն, ի դեպ, «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» աշխատությունում նա անվանում է ինչպես «ստորագրութիւն», այնպես էլ «ենթագրութիւն») մի որևէ բառ պակասեցնելով նկարագրությունն իր իմաստը չի կորցնում, մինչդեռ նույն բանը կատարելով սահմանման հետ, վերջինիս զրկում ենք սահմանում մնալուց։ Այսպես, օրինակ, երբ մարդու մասին ասում ենք, թե նա հետևակ է, երկոտանի, ուղղորդագնաց, լայնեղունգ, ապա այդ նկարագրությունն իր ուժը չի կորցնում, եթե բաց թողնենք «լայնեղունգ» բառը։ Սակայն եթե սահմանելով մարդը, ասենք, որ նա «բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ»[39] կենդանի է և ապա բաց թողնենք «բանաւոր» («բանական») բառը, ապա այս բնորոշումը կդադարի մարդու սահմանումը լինելուց, քանի որ մարդը չի կարող մարդ լինել առանց բանականության հատկության։

Սահմանման ու նկարագրման (ենթադրության) տարբերման մի չափանիշ ևս նկարագրված է Դավիթ Անհաղթի մեկնաբանություններում։ Սահմանման մեջ կիրառվում է առանձնահատուկ տարբերիչ հատկությունը, իսկ նկարագրման մեջ ընդհանուր և հատուկ տարբերիչ հատկությունը։ «Իսկ ըստ երկ-

---

տերմին։ Նույնն է պատկերը «Վերլուծութիւն «Յաղագս ներածութեանն» Պորփիւրի» այն հրատարակության մեջ, որը զետեղված է «Գիրք Պորփիւրի, որ կոչի ներածութիւն» երկում (Մադրաս, 1793, տե՛ս, օրինակ, էջ 149, 150, 151, 152, 153)։ Եվ հակառակը, «Գիրք սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի...» 1731 թ. հրատարակությունում կիրառվում է «ստորագրութիւն» տերմինը (տե՛ս էջ 37, 38, 41, 42, 43, 45, 46)։ Մինչդեռ «Մատենագրութիւնք նախնեաց. Կորիւն, Մամբրէ, Դաւիթ» հրատարակությունում (Վենետիկ, 1833) հանդիպում ենք ինչպես «ստորագրութիւն» (տե՛ս, օրինակ, էջ 137, 141, 264, 285, 286), այնպես էլ «ստորագրութիւն» (տե՛ս, օրինակ, էջ 137, 139, 140, 141) բառերին։ Չպետք է ենթադրել, թե հարցը ուղղագրության մեջ է։ «Մտորագրութիւնը» և «ստորագրութիւնը» տարբեր բառեր են և տարբեր հասկացություններ են արտահայտում։ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի համաձայն (հատ. Բ, Վենետիկ, 1837) «ստորագրութիւնը» ընդարձակ սահմանումն է, բացատրությունը, որը համապատասխանում է լատինական descriptio բառին (էջ 748), մինչդեռ «ստորագրութիւնը» ենթադրություն է նշանակում (նույն տեղում)։ Ուստի ճիշտը պետք է համարել «ստորագրութիւն» տերմինի օգտագործումը, որը և ամենայն հավանականությամբ պիտի տեղ գտած լինի Դավիթ Անհաղթի երկասիրությունների բնագրերում։

39 Նույն տեղում, էջ 78։

բորդ յեղանակի զանազանի յատկեղն ի հասարակաբար և ի յատկապես տարբերութենէ. քանզի նոքա յենթադրութիւնս յարատոցին, իսկ յատկեղքն ի սահմանս»[40]։

Քննարկելով «ստորագրական սահմանման» անվանման հարցը, Դավիթ Անհաղթը նկատում է, որ վերջինիս դեմ առարկություններ կան։ Դրանք հանգում են հետևյալին. քանի որ էականին պետք է առավելություն տալ պատահականի համեմատությամբ, և սահմանումն առաջանում է էական հատկություններից, իսկ «ստորագրությունը»՝ պատահական հատկություններից, ապա ինչո՞ւ ենք օգտագործում «ստորագրական սահմանում», առաջինը նշելով «ստորագրականը» և ոչ թե «սահմանում ստորագրական», որի դեպքում կընդգծենք էականի առաջնությունը։ Այս հարցի պատասխանը Անհաղթի մոտ հանգում է հետևյալին. ասել «ստորագրական սահմանում» թե «սահմանում ստորագրական», դրանից իմաստը չի փոխվում։ Ընդ որում նման պատասխան տալու համար Դավիթը հենվում է Արիստոտելի վրա, հիշեցնելով վերջինիս խոսքերն այն մասին, որ անվան և բայի տեղափոխությունից ասածի իմաստը չի փոխվում[41]։

Մեկնաբանելով Պորփյուրին, Դավիթ Անհաղթը նշում է, որ կատեգորիաների (սեռ, տեսակ, տարբերություն, հատուկ հատկություն, պատահական հատկություն) նկատմամբ Պորփյուրը կիրառում էր ինչպես սահմանումը, այնպես էլ նկարագրությունը (ստորագրություն), սակայն դրանցից յուրաքանչյուրն իր տեղում։ Երբ Պորփյուրն այդ կատեգորիաները քննարկում էր որպես այդպիսիք («որպէս առ իրս»)՝ նա դիմում էր նկարագրմանը, իսկ երբ կատեգորիաները քննարկում էր փոխկապակցության մեջ («որպէս առ կալմունս իրաց»), այն հարաբերության մեջ, որ դրանք ունեն միմյանց նկատմամբ՝ դիմում էր սահմանման հնարին։

Դավիթ Անհաղթը ելնում է այն դրույթից, որ սահմանումը և ստորագրությունը կապակցված են, միասնական են։ Ստորագրությունը նա համարում է սահմանման պատկերը. «...Պատկեր սահմանի է ստորագրութիւն։ Արդ եթէ սահման մի բնութիւն յայտնէ, ապա և ստորագրութիւն»[42]։

Հայ տրամաբանը գտնում է, որ կան դեպքեր, երբ մենք սահմանում ենք առարկաների կապակցությունը և նկարագրում առարկաները, որոնցում դրսևորվում է սահմանվող կապակցությունը։ «...Եթէ զբաղազանութիւնն սահմանեաց, որպէս ցուցանելոց եմք. իսկ զիրսն՝ յորս բաղազանութիւնքն տեսանին, ստորագրեաց»[43]։ Դավիթ Անհաղթը նշում է, որ ոչ բոլորն են համաձայն սահմանման և ստորագրության այդպիսի միասնական կիրառման հետ, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է քննարկվող հինգ կատեգորիաներին (սեռ, տեսակ, տարբերություն, հատուկ հատկություն, պատահական հատկություն)։ Այդ տեսակետի համաձայն նման հնարը անընդունելի է փիլիսոփայի

---

40 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1716, էջ 133բ, հմմտ. Դ ա ւ ի թ Ա ն հ ա ղ թ, Վերլուծութիւն «ներածութեանն» Պորփիւրի, էջ 126։ Հմմտ. նաև ձեռ. № 1746, էջ 130բ։

41 Տե՛ս Аристотель, Об истолковании, 10, 20в, որտեղ Արիստոտելն իր միտքը պարզաբանում է «կա գունատ մարդ» և «կա մարդ գունատ» համարժեք դատողություններով։ Ինքը Դավիթ Անհաղթը գրում է, թե «զնոյն իսկ նշանակեն, եթէ ոք ասիցէ՝ Սոկրատէս ճէմի, և թե՝ ճէմի Սոկրատէս» (էջ 36)։

42 Դ ա ւ ի թ Ա ն հ ա ղ թ, Վերլուծութիւն «ներածութեանն» Պորփիւրի, էջ 66։

43 Նույն տեղում։

համար, քանի որ անհայտը բացահայտվում է անհայտի միջոցով։ Դավիթ Անհաղթի առարկությունը հանգում է հետևյալին. սահմանման և ստորագրության միասնական կիրառումը կարող է տեղի ունենալ ոչ բոլոր դեպքերում։ Այդ զուգակցումը կիրառելի է, երբ քննարկվող առարկաները սերտ առնչության մեջ են, «յոյժ ընդունելի է. քանզի այսոքիկ առ միմեանս ունին ընտանութիւն և ի ձեռն միմեանց նշանակին»[44]։

Ցույց տալով, որ սահմանումը և ստորագրությունը համաչափ կիրառելի են սեռ, տեսակ, տարբերություն, հատուկ հատկություն և պատահական հատկություն կատեգորիաների նկատմամբ («...Որպէս առ բաղազանութիւնս բարբառոցդ, զորս ունին առ միմիեանս, սահման ասեմք զոլ. իսկ որպէս առ իրսն, յորս բաղազանութիւնքն, ստորագրութիւն ասեմք զոլ»[45]), դրանով իսկ Դավիթ Անհաղթը ընդգծում է այդ կատեգորիաների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը։

* * *

Տրամաբանության մեջ սահմանման հնարը սերտորեն առնչվում է բաժանման հնարի հետ։ Դա շատ լավ գիտակցում է Դավիթ Անհաղթը։ Այդ տեսակետից հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ Վենետիկի Մխիթարյանները Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» հայտնի աշխատությունը հրատարակել են հետևյալ խորագրով՝ «Նորին Դաւթի եռամեծի և Անյաղթ փիլիսոփայի ընդ դէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի և սահմանք և տրամատութիւնք իմաստասիրութեան»[46]։ Դավիթ Անհաղթի երկասիրության խորագրում այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ միայն փիլիսոփայության սահմանմանը, այլ նաև վերջինիս բաժանմանը («տրամատութիւնք»)։ Դա որոշակիորեն համապատասխանում է հեղինակի աշխատության բովանդակությանը։ Վկայակոչելով Պլատոնին, Դավիթ Անհաղթը նշում է, թե բաժանումը (որպես տրամաբանության հնար) մեզ պարգևել են Պրոմեթեոսի երևելի հրի միջոցով և ավելացնում. երբ առասպելաբանությունն ասում է, թե Պրոմեթեոսը աստվածներից 'գողացավ հուրը և շնորհեց մարդկանց, ապա դա ոչ այլ ինչ է, քան այլաբանություն։ Պրոմեթեոսը նախ և առաջ հայտնաբերեց բաժանման հնարը և այդ վերջինս է, որ նման է հրի և այդ պատճառով են ասում, թե Պրոմեթեոսը շնորհեց մարդկանց հուրը (էջ 22—24)։ Ինչո՞ւ է կրակը համեմատվում բաժանման հնարի հետ։ Այն պատճառով, որ կրակը իրարից անջատում է, տրոհում համասեռ և տարասեռ առարկաները։

Քննարկելով սահմանման և բաժանման իմացական նշանակությունը, Դավիթ Անհաղթը հանգում է այն եզրակացության, թե նախ պետք է սահմանել և ապա բաժանել (էջ 24)։ Տրամաբանական այդ հնարների իմացական նման կիրառման հիմքում ընկած է եզակիի և ընհանուրի փոխհարաբերության այն ըմբռնումը, որին հարում է Դավիթ Անհաղթը։ Նրա կարծիքով, սահմանումը վերաբերում է եզակիին (ըստ Դավիթ Անհաղթի՝ միակին), իսկ բաժա-

---

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում։

46 Տե՛ս «Մատենագրութիւնք նախնեաց. Կորիւն, Մամբրէ, Դաւիթ», էջ 120։ Հմմտ. Ս. Արեշատյանի համահավաք բնագրի խորագրի հետ՝ «Դաւթի եռամեծի և Անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի. Սահմանք եւ տրամատութիւնք իմաստասիրութեան» (Դ ա ւ ի թ Ա ն յ ա ղ թ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 2)։

նումը՝ ընդհանուրին (ըստ Դավթի տերմինաբանության՝ բազմությանը)։ Եվ քանի որ, Դավիթ Անհաղթի տեսակետի համաձայն, եղակին նախորդում է բազմությանը (մի պնդում, որը ցույց է տալիս Դավիթ Անհաղթի ըմբռնման սահմանափակությունը, միակողմանիությունը եղակիի և ընդհանուրի մեկնության հարցում), ուստի նախ պետք է սահմանել, ապա բաժանել։

Դավիթ Անհաղթը, խոսելով բաժանման մասին, նկատի ունի դիխոտոմիկ բաժանումը. «...Բաժանումն ընդդէմ նորին զմինն ի բազումս տրամատէ և յանբաւս, քանզի առնու զգոյացութիւն և բաժանէ ի մարմին և յանմարմին, և զմարմինն ի ներբուսականն և յանբուսականն։ Նմանապէս և զայլսն, որ ի կարգին» (էջ 24—26)։

Բաժանումը Դավիթ Անհաղթը դիտում է մակաբաժանման և ստորաբաժանման շարքի մեջ։ Եթե բաժանումը ենթակա իրողության (ստույգ կլիներ ասել՝ հասկացության ծավալի) առաջին հատումն է, ապա մակաբաժանումը երկրորդ հատումն է նոր հիմքի համաձայն։ Ընդ որում, թե՛ բաժանումը և թե՛ մակաբաժանումը Դավիթ Անհաղթը դիտում է որպես երկանդամ բաժանում։ «...Բաժանումն է առաջին հատումն ենթակայ իրողութեան, որգոն, յորժամ ասեմք, եթէ ի կենդանեացն ոմանք բանականք են և ոմանք անբանք։

Իսկ մակաբաժանումն է երկրորդ հատումն նորին ենթակայ իրողութեան ըստ այլ յեղանակի եղեալ, որպէս յորժամ զկենդանին վերստին բաժանելով ասեմք, եթէ ի կենդանեացն ոմանք մահկանացուք են և ոմանք անմահք» (էջ 114—116)։ Ստորաբաժանումը գործ ունի մակաբաժանման հետևանքով ստացված երկու անդամներից մեկի՝ հայտնի անդամի բաժանման հետ, որն այս անգամ տեղի է ունենում ոչ թե երկանդամ բաժանման ձևով, այլ որևէ հատկության հիման վրա։ Համեմայն դեպս այդ մասին է վկայում Դավիթ Անհաղթի կողմից կիրառվող օրինակը, որի համաձայն մակաբաժանման միջոցով ստացված «մահկանացու» հասկացության ծավալի բաժանումից ստացվում են «մարդ», «ձի» և նման այլ հասկացություններ (էջ 116)։

Ինչպես «փիլիսոփայություն» հասկացության բովանդակության սահմանումը, այնպես էլ նույն հասկացության ծավալի բաժանումը քննարկելիս Դավիթ Անհաղթը նախ հետազոտում է բուն տրամաբանական հնարի էությունը, կառուցվածքը, տեսակները և այլն։

Անհաղթը գտնում է, որ բաժանման տեսակներից ստույգ են երեքը. «երեք են ստուգապէս յեղանակք բաժանման...» (էջ 136)։ 1. «Ի սեռէ ի տեսակս» (սեռային հասկացության ծավալի բաժանումը տեսակային հասկացությունների)։ Բաժանման այս եղանակը Դավիթ Անհաղթի ըմբռնմամբ երկանդամ բաժանում է։ Դրա մասին է վկայում այն օրինակը, որով նա լուսաբանում է բաժանման նշված եղանակը. «Արդ, որպէս ի սեռէ ի տեսակս, յորժամ բաժանեմք զկենդանին ի բանականն և յանբանն» (էջ 136)։ 2. «Ի բոլորէ ի մասունս» (ամբողջի բաժանումը մասերի)։ Բաժանման այս եղանակը, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, իրականանում է երկու ձևով. ա) ամբողջի բաժանումը համամասնությունների կամ նման մասերի, որի հետևանքով ստացված մասերը ունենում են նույն բնույթը, ինչ որ ամբողջը։ Օրինակ. «զբոլոր երակն բաժանեմք ի փոքր երակս» (էջ 136)։ բ) Ամբողջի բաժանումը մասերի այն եղանակով, որի դեպքում ստացված մասերը ո՛չ ամբողջին են նման և ո՛չ էլ միմյանց։ Այս դեպքը Դավիթ Անհաղթը լուսաբանում է գլխի բաժանմամբ աչքերի, ականջների, քթի։ 3. «Ի հոմանուն ձայնէ ի զանազան նշանակեալս»

(Նույն անվամբ նշանակածի բաժանումը զանազան նշանակումների)։ Օրինակ. «զշուն ձայնդ բաժանեմք յերկնային և յերկրային և ի ծովային» (էջ 136)։ Օրինակից բխում է, որ բաժանման այս ձևը, Դավիթ Անհաղթի ըմբռնմամբ, բաժանումն է ըստ հատկության փոփոխման։

Այսպիսով, Դավիթ Անհաղթը ընդունում է բաժանման հետևյալ եղանակները. երկանդամ բաժանում, բաժանում ըստ հատկության փոփոխման և ամբողջի բաժանումը մասերի։ Վերջինս տրամաբանության գիտության զարգացման ընթացքում ըստ էության մերժվել է, և դա բավարար հիմք ունի։ Առաջին երկու դեպքում (ըստ քիչ առաջ նշված կարգի) գործ ունենք հասկացության ծավալի բաժանման, երկրորդում՝ բուն առարկայի մասերի բաժանման հետ։ Վերջինն ըստ էության հանգում է տրամաբանական այն հնարին, որը հայտնի է որպես վերլուծություն (անալիզ) և որը, սովորաբար, անկասկած տարբերվում է հասկացության ծավալի բաժանումից։

Դավիթ Անհաղթը քննարկում է նաև բաժանման այն տեսակները, որոնք իր կարծիքով ստույգ ձևեր չեն, առարկում է այն տրամաբանների կարծիքի դեմ, որոնք բաժանման նշված երեք եղանակներից բացի առաջադրում էն բաժանման այլ եղանակներ։ Որո՞նք են բաժանման այդ ոչ ստույգ, ոչ իրական եղանակները.

1. «Ի տեսակէ յանհատս» (էջ 136). այս եղանակը տեսակային հասկացության ծավալի բաժանումն է եղակի հասկացությունների։ Դրա օրինակն է. «մարդ» հասկացության ծավալի բաժանումից ստացվում են՝ Սոկրատես, Պլատոն, Ալկիբիադես և յուրաքանչյուր այլ անհատ։

Նման սահմանման դեմ Դավիթ Անհաղթի առարկությունը հանդում է հետևյալին. «...ոչ կարէ որպէս ի տեսակէ յանհատս լինել բաժանումն զի անհատքն անբաւք և անորիշք են առ ի թուել, վասն զի ոմանք ապականին և ոմանք լինին, զորս ոչ կարեմք ընդ թուով արկանել» (էջ 138)։ Ըստ էության այս դեպքում դարձյալ գործ ունենք բաժանման այն եղանակի հետ, որն իրականանում է ըստ հատկության փոփոխման։ Հայտնի է նաև, որ նման բաժանման կանոնավորությունը պահանջում է համաչափություն (բաժանման անդամների ծավալների գումարը պետք է համընկնի բաժանվող հասկացության ծավալին)։ Այդ պահանջը կարելի է իրականացնել միայն այն դեպքում, եթե բաժանման հետևանքով ընդգրկված լինեն բաժանման բոլոր հնարավոր անդամները։ Սակայն այդ պահանջը միշտ չէ, որ կարելի է իրականացնել, մասնավորապես այն դեպքում, երբ բաժանվող հասկացությունը անսահմանափակ է։ Այդպիսին է Դավիթ Անհաղթի կողմից քննարկվող օրինակը՝ «մարդ» հասկացությունը՝ մանավանդ, հասկացության նկատմամբ պատմական մոտեցում ցուցաբերելու դեպքում, երբ հասկացությունը դիտվում է որպես մտավոր կառույց, որի ծավալը տարածվում է ոչ միայն առկա, այլև անցյալ և ապագա առարկաների վրա։ Այդպիսի, ըստ էության՝ դիալեկտիկական. մոտեցում է ցուցաբերում Դավիթ Անհաղթը, առարկաները դիտելով ոչնչացման և գոյացման ընթացքում. «վասն զի ոմանք ապականին և ոմանք լինին» (էջ 138)։

2. «Ի պատահմանէ յէութիւն» (էջ 136)։ Սա այն բաժանումն է, որի հետևանքով պատահական հատկություններից գնում ենք դեպի էականը։ Օրինակ, սպիտակներից որոշ առարկաներ ձյուն են, որոշ առարկաներ՝ կիր («բուռ»)։ Դա այն պատճառով, որ հատկությունը,—դատում է Դավիթ Ան-

հաղթը,—բաժանման ենթակա չէ առանց այն առարկայի, որի հատկությունն է ինքը։ «...Ոչ եթէ զսպիտակն զինքն ըստ ինքեան առանց մարմնոյ բաժանէ, այլ զմարմինն բաժանէ, յորում սպիտակն։ Իսկ մարմին էութիւն է. ապա ուրեմն զէութիւն յէութիւն բաժանէ և ոչ զպատահումն յէութիւն» (էջ 138)։ Այս փաստարկին Դավիթ Անհաղթը ավելացնում է նաև հետևյալ նկատառումը՝ այն, ինչ ենթակա է բաժանման, բաժանվում է իր նմանների և ոչ թե այնպիսիների, որոնց հետ նմանություն չունի։ Օրինակ, էակները բաժանելով բանական և ոչ բանական էակների, ստանում ենք դարձյալ էակներ և ոչ թե ոչ էակներ։ Մինչդեռ, երբ բաժանումը տեղի է ունենում պատահականից դեպի էականը, բաժանման հետևանքով ստացված անդամները նմանություն չունեն բաժանվողի հետ։

3. «Յէութենէ ի պատահումն» (էջ 136)։ Այս անգամ տեղի է ունենում նախորդին հակառակ ընթացքը, էությունից գնում ենք դեպի պատահական հատկությունները։ Օրինակ, «մարդ» հասկացությունից բխեցնենք սպիտակ և սև։ Բաժանման անդամները դարձյալ նմանություն չեն ունենա բաժանվողի հետ։

4. «Ի պատահմանէ ի պատահումն» (էջ 136)։ Այս դեպքում հասկացության բաժանման ընթացքում պատահականից գնում ենք դեպի պատահականը։ Դավիթ Անհաղթը դա լուսաբանում է հետևյալ օրինակով. որոշ սպիտակներ ջերմ են, որոշ սպիտակներ՝ ցուրտ. ջերմ որպես կիր, ցուրտ որպես ձյուն։ Այս դեպքում նույնպես բաժանման անդամները նմանություն չունեն բաժանվողի հետ։ «...Քանզի ասելն, թէ սպիտակին ոմանք ջերմ են և ոմանք ցուրտ, ոչ եթէ զպատահումն ինքն ըստ ինքեան բաժանէ զըստ ինքեանց պատահմունս. այլ զմարմինս բաժանէ, յորս պատահմունքն» (էջ 138)։

5. «Ի միոջէ և առ միս» (էջ 136)։ Բաժանման այն եղանակն է, երբ բաժանումը տեղի է ունենում եզակիից դեպի եզակին։ Ահա այս բաժանման լուսաբանումն ըստ Դավիթ Անհաղթի. «Իսկ ի միոջէ, որպէս յորժամ ասեմք՝ բժշկական գիրք, բժշկական դեղ, բժշկական գործի։ Իսկ առ միս, յորժամ ասեմք՝ առողջային գիրք, առողջային տաճ, առողջային դեղք, վասն զի առ միս բացահայտելով, այսինքն առ առողջութիւն, անուանեցանք զառողջայինս» (էջ 136)։ Այս բաժանման դեպքում, ինչպես ելակետում («ի միոջէ»), այնպես էլ արդյունքում («առ միս»), մենք գործ ունենք այնպիսի հասկացությունների հետ, որոնցում արտացոլված առարկաները, Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, անորոշ են և անթիվ։ Այդ պատճառով էլ նման բաժանումը ևս հայ տրամաբանը համարում է բաժանման ոչ իրական եղանակ։

Այսպիսով, բաժանման քննարկվող ութ եղանակներից[47] Դավիթ Անհաղթը երեքը համարում է իրական, ստույգ եղանակ, իսկ հինգը՝ ոչ իրական, ոչ ստույգ եղանակներ։

---

47 Դավիթ Անհաղթը այդ ութ եղանակները նկարագրում է հետևյալ կերպ. «Եւ պարտ է գիտել, եթէ ոմանք ութ յիղանակս ասեն զոլ բաժանման, և են այսոքիկ։ Որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի տեսակէ յանհայտս, որպէս ի բոլորէ ի մասունս։ Եւ այս երկակի՝ կամ ի նմանամասնեայս լինի, կամ յաննմանամասնեայս։ Որպէս ի հոմանուն ձայնէ ի զանազան նշանակեալս, որպէս յէութենէ ի պատահումն, որպէս ի պատահմանէ յէութիւն, որպէս ի պատահմանէ ի պատահումն, որպէս ի միոջէ և առ միս» (էջ 136)։ Ս. Արևշատյանի ռուսերեն թարգմանությամբ կարդում ենք. «Надо знать, что некоторые говорят о том, что существует восемь мотивов разделения. Вот они: от рода к виду, от вида к индивиду, от

Դավիթ Անհաղթը մեծ նշանակություն է տալիս հասկացության բաժանման (ինչպես արդեն նշվել է վերևում՝ նաև սահմանման) իմացական դերին։ Նրա կարծիքով սահմանման և բաժանման միջոցով կարելի է բացահայտել փիլիսոփայության էությունը։ «Արդ ուսեալք, եթէ զինչ է իմաստասիրութիւն, ևկեսցուք այսուհետև և ասացուք, եթէ որպիսի ինչ է։ Այլ և այս յայտնի եղև ի ձեռն լառաջասացելոցդ, քանզի ուսաք ի ձեռն սահմանացդ և ի ձեռն բաժանման։ Ի ձեռն բաժանման ուսաք, եթէ տեսական և գործնական է, քանզի յայսոսիկ միայն բաժանի» (էջ 154)։ Եվ ապա. «Արդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն...» (էջ 154)։

Բաժանման խնդիրը Դավիթ Անհաղթը համարում է սեռի բաժանումը տեսակների («Եւ է գործ բաժանականին՝ առնուլ զսեռս և բաժանել ի տեսակս»[48])։

Նա քննարկում է բաժանման կանոնները, որոնք համարում է եղանակներ, մեկնաբանում է բաժանման պլատոնյան երեք եղանակները։

1. Բաժանումը պետք է տեղի ունենա գերագույն սեռից մինչև վերջին տեսակները, սակայն վերջիններից չպետք է անցնել եզակի հասկացություններին։

Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ, այս պահանջն արգելում է բաժանումը հասցնել մինչև եզակիությունների, քանի որ եզակին նրա կարծիքով մշտնջենական չէ։ Այսպես, եթե «մարդ» հասկացությունը բաժանվի Սոկրատեսի, Պլատոնի, Ալկիբիադեսի, ապա կստացվեն եզակիություններ, որոնք այսօր դեռևս գոյություն ունեն, բայց վաղը կարող են չլինել, մինչդեռ բաժանումը, նույն մեկնաբանման համաձայն, պետք է այնպիսի անդամներից

целого к части. И это производится двояко—на подобные части и на разные, от одноименного высказывания к различным обозначениям, от сущности к привходящему признаку, от привходящего признака к сущности, от привходящего признака к привходящему признаку, от единичного к единичному» (էջ 137)։ Այս թարգմանությունը, մեր կարծիքով, ճշգրտումների կարիք ունի։ «И это производится двояко—на подобные части и на разные» բառերից հետո պետք է չինի վերջակետ (ինչպես ուս կա հայերեն տեքստում)։ Այդ խոսքերը վերաբերում են «ի բոլորէ ի մասունս» բաժանմանը։ Բնագրի համեմատությամբ այդ շեղումը հանգեցնում է այն բանին, որ ռուս ընթերցողի համար անհասկանալի է դառնում, թե որոնք են Դավիթ Անհաղթի կողմից նշված բաժանման ութ եղանակները։

Քննարկվող հոդվածի ռուսերեն թարգմանությունը բաժանման եղանակների քանակի ճիշտ պատկերացման տեսակետից ստույգ չէ նաև Ս. Արևշատյանի թարգմանության նոր հրատարակության մեջ (М., 1975), որտեղ կարդում ենք. «Надо знать, что некоторые говорят о том, что существует восемь способов разделения. Вот они: от рода к виду, от вида к индивиду, от целого к части. И это [разделение] производится двояко: на подобные части и на разные, от одноименного высказывания к различным обозначениям, от сущности к случайному признаку, от одного к [чему-то] другому» (էջ 89—90)։ Ճշգրիտ թարգմանությունը հեշտությամբ կարող էր ցույց տալ, որ խոսքը իրոք բաժանման ութ եղանակների մասին է (դրանք նշվեցին վերևում, երեքը որպես իրական, ստույգ եղանակներ, իսկ հինգը՝ ոչ իրական, ոչ ստույգ եղանակներ)։ 1975 թ. հրատարակությունում 1960 թ. հրատարակության համեմատությամբ տվյալ հատվածի թարգմանության մեջ որոշ ճշգրտումներ են մտցված։ Այսպես, օրինակ, 1960 թ. հրատարակության մեջ «բաժանման եղանակը» թարգմանված է որպես «мотив разделения», 1975 թ. հրատարակությունում՝ որպես «способ разделения»։ Սա բարելավում է, բայց մասամբ։ Ճիշտ կլիներ թարգմանել որպես «способ (տվյալ դեպքում կարելի էր նաև՝ вид) деления»։ 1960 թ. հրատարակությունում օգտագործվում է «привходящий признак», 1975 թ. հրատարակությունում այդ տերմինը իրավացիորեն փոխարինված է «случайный признак» տերմինով։

48 Դ ա ւ ի թ Ա ն յ ա ղ թ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի, էջ 16։

բաղկացած լինի, որոնք մշտնջենական են։ Նման մեկնաբանումը կարող է դիտվել որպես մետաֆիզիկական մոտեցման դրսևորում։ Ինքը Դավիթ Անհաղթը ուշադրություն է դարձնում հարցի իմացաբանական կողմի վրա և այն միտքն է ընդգծում, որ այդպիսի բաժանմամբ մենք հետապնդում ենք կայուն գիտելիքներ ձեռք բերելը, «վասն զի հաստատուն գիտութիւն ըստ մշտնջենաւորաց լինի և որք միշտ և նոյնպէս գոն»[49]։ Սակայն այս իմացաբանական եզրակացության հիմքում դարձյալ ընկած է նրա մետաֆիզիկական ըմբռնումն այն մասին, թե փոփոխական և անցողիկ անհատների կողքին գոյություն ունեն նաև գոյի մշտնջենական և միակերպ ընդհանուր ձևեր։

Անհրաժեշտ է հատկապես նշել, որ այս կանոնի «իմացաբանական հիմնավորումը» Դավիթ Անհաղթի կողմից մեկ անգամ ևս վկայում է փիլիսոփայական համակարգում իմացաբանականի և տրամաբանականի միասնությունը փաստարկման ընթացքում։

2. Բաժանումը պետք է տեղի ունենա աստիճանաբար, չպետք է թռիչք գործել բարձր աստիճանի վրայով դեպի շատ ավելի ցածր աստիճանը[50]։

3. Բաժանման հիմքը պետք է լինի էական և ոչ թե ոչ էական հատկությունը, քանի որ նախ՝ ոչ էական հատկությունները անսահման շատ են և, ապա՝ նրանք չեն բացահայտում առարկայի բնույթը[51]։

* * *

Դավիթ Անհաղթի կարևոր ներմուծությունը ոչ թե փիլիսոփայությանը նոր սահմանում կամ սահմանումներ տալն է, այլ այն, որ նա ա) հենվելով փիլիսոփայությանը Պյութագորասի, Պլատոնի և Արիստոտելի տված սահմանումների վրա, ստեղծել է փիլիսոփայության սահմանումների համակարգ, ընդսմին ցույց տալով, որ այդ սահմանումներից ոչ մեկն առանձին վերցրած չի կարող բացահայտել փիլիսոփայության էությունը. բ) այդ համակարգը ստեղծել է հիմք ընդունելով հետազոտության դիալեկտիկական մեթոդը[52]. գ) ելել է մասնավորապես այն դրույթից, թե առարկան ճանաչելու համար պետք է վերջինս քննել իր բոլոր կողմերով հանդերձ, այլ առարկաների հետ ունեցած կապերի ու միջնորդումների մեջ, որը և ցույց է տալիս միևնույն առարկայի տարբեր սահմանումների անհրաժեշտությունը[53]. դ) ելակետ է ընդունել այն

---

49 Նույն տեղում, էջ 98։

50 Նույն տեղում։

51 Նույն տեղում, էջ 100։

52 Դավիթ Անհաղթի դիալեկտիկական մտածելակերպը խնդրո առարկայի նկատմամբ մասնավորապես դրսևորվում է այն բանում, որ նա փորձում էր հիմնավորել հետազոտվող հարցի տրամաբանական և իմացաբանական կողմերի համատեղ քննարկման կարևորությունը (տե՛ս, մասնավորապես, «Վերլուծութիւն «ներածութեանն» Պորփիւրի», էջ 140), սահմանումների իր ստեղծած համակարգի գնահատման կապակցությամբ նշում է ոչ միայն երևույթների կապակցությունը, այլ նաև հակադրությունների միասնությունը՝ ամբողջության մեջ սկիզբը և վերջը կապակցված են («քանզի ի բոլորում շարակցեալ գոյ սկիզբն կատարմանն», էջ 106)։

53 Տեղին է հիշել, որ Արիստոտելը «Տոպիկայում» կասկածի տակ է դնում միևնույն երևույթի տարբեր սահմանումների պիտանի լինելը։ Ստագիրիտի կարծիքով, եթե գոյություն ունի որևէ սահմանում և երբ առաջադրվում է նույն հասկացության մի նոր սահմանում, ապա վերջինիս առավելության դեպքում հարկ է հրաժարվել նախորդ սահմանումից. «...Միևնույնի

դրությունը, որ միևնույն առարկայի տարբեր սահմանումները կարող են ունենալ տարբեր իմացական արժեքներ և այդ դեպքում սահմանման համաձայն ստեղծելիս սահմանումները պետք է դասակարգել կարևորից դեպի պակաս կարևորը գնալով, մի սկզբունք, որը սուբորդինացիայի յուրովի դրսևորման ձև է. և) սահմանումների իր համակարգն ստեղծելիս մշտապես դիմել է փաստարկման եղանակին, որով և հարստացրել է փաստարկման արվեստը. ղ) սահմանումը և բաժանումը դիտարկել է որպես անքակտելի կապի մեջ գտնվող կատեգորիաներ. է) «սահմանում» և «բաժանում» տրամաբանական կատեգորիաների առաջացումը բացատրել է մարդկանց իրական հարաբերություններով, առաջինները դիտելով որպես վերջիններիս մտածական արտացոլումներ[54]. ը) յուրովի վերիմաստավորել է այն ամեն կարևորը, որը ստեղծել էին նրա նախորդները սահմանման և բաժանման տրամաբանական տեսության բնագավառում և զգալիորեն հարստացրել է այդ տեսությունը։

УЧЕНИЕ ДАВИДА НЕПОБЕДИМОГО ОБ ОПРЕДЕЛЕНИИ И ДЕЛЕНИИ

Член-корр. АН АрмССР Г. А. БРУТЯН

(Резюме)

Задавшись целью анализировать природу, сущность философии, Давид Непобедимый прибегает к всестороннему рассмотрению определения и деления понятия «философия». Для выполнения намеченной задачи армянский мыслитель делает предметом исследования сами логические приемы определения и деления. В статье показывается, что вклад Давида Непобедимого в историю научной мысли не в том, что он предложил новые определения (или определение) философии, а в том, что он: а) опираясь на определения философии, данные Пифагором, Платоном и Аристотелем, создал систему определений философии, при этом доказав, что ни одно определение, отдельно взятое, не может раскрыть сущность философии; б) эту систему создал, основываясь на диалектическом методе; в) исходил, в частности, из того положения, что для знания предмета его следует изучить со всех сторон, в его связях и переплетениях с другими предметами, что показывает необходимость

համար մեկից ավելի սահմանում չկա» (VI, 14, 151в)։ Ավելին, «Մետաֆիզիկայում» Արիստոտելը փորձում է իմացաբանական հիմնավորում տալ յուրաքանչյուր հասկացության միայն մեկ սահմանման անհրաժեշտությանը։ Նրա մեկնաբանմամբ, սահմանումը վերաբերում է էությանը, իսկ վերջինս մեկն է (տե՛ս VII, 12, 1037в)։ Եթե այս տեսակետը համադրելու լինենք սահմանման մասին Դավիթ Անհաղթի բմբռնման հետ, ապա անշուշտ պետք է ընդգծել, որ դայ տրամաբանի հիմնական դրությունը զգալի քայլ է սահմանման գիտական տեսություն ստեղծելու ճանապարհին։

54 Սկզբունքային նշանակություն տալով վերը հիշատակած դրությանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Կ. Զալոյանը նշում է. որ այս «վկայում է մեր փիլիսոփայի աշխարհընկալման ամբողջ դասակարգի մատերիալիստական տենդենցի մասին» («Հայոց փիլիսոփայության պատմություն», Երևան, 1975, էջ 187։ Տե՛ս նաև С. С. Аревшатян, Формирование философской науки в Древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, էջ 312)։

разных определений одного и того же предмета; г) исходил из того, что разные определения одного и того же предмета могут иметь различные познавательные значения, а следовательно, при создании системы определений их следует классифицировать от более важного к менее важному—этот принцип выступает как своеобразное проявление субординации; д) при создании своей системы определений философии он постоянно прибегал к аргументации и обогатил искусство аргументации; е) рассматривал категории определения и деления в их тесной связи и взаимозависимости; ж) происхождение указанных категорий объяснял трудовой деятельностью людей, их действительными отношениями, рассмотрев первые (категории) как мысленное отображение последних; з) по-своему переосмыслил все то главное, что было создано логической мыслью в области исследуемых категорий, заметно обогатив учение логики об определении и делении понятия.